ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 10. Ծանուցման ժամկետները

1. Պետական լիազոր մարմինը հայտի վերաբերյալ որևէ որոշում ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ փոստային կամ կապի այլ միջոցներով, այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով որոշումն ուղարկում է հայտատուին: Որոշումներն ուղարկվում են հայտատուի նախընտրած՝ սույն մասում նշված եղանակներից մեկով: Եթե որոշումը հայտատուին ուղարկվել է նրա նախընտրած՝ ոչ փոստային առաքմամբ, ապա նա կարող է պետական լիազոր մարմնում դա ստանալ առձեռն՝ ուղարկման թվականից եռամսյա ժամկետում:

2. Սույն օրենքով նախատեսված այլ ծանուցումներն ու հարցումն ուղարկվում են օրենքով սահմանված համապատասխան ժամկետները լրանալուց կամ գործողությունները կատարելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, փոստային կամ կապի այլ միջոցներով, այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով: Ծանուցումներն ու հարցումներն ուղարկվում են հայտատուին նրա նախընտրած՝ սույն մասում նշված եղանակներից մեկով: Եթե ծանուցումներն ու հարցումները հայտատուին ուղարկվել են ոչ փոստային առաքմամբ, ապա նա կարող է պետական լիազոր մարմնում դա ստանալ առձեռն՝ ուղարկման թվականից եռամսյա ժամկետում: